



Մ Ե Ծ Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ն Ը



Ազգ. վարչութեան կողմէ նշանակուած Երեւանի նահապետական կեդր. Յանձնաժողովը երէկ կրկին նիստ գումարեց Ղալաթիոյ Նորհրդարանը. Տօքթ. Թոր-գոմեան էֆ. Ի առնանպետութեան տակ և շարունակեց իր խորհրդակցութիւնները հանդէսին յանրամասնութեանց շուրջ:

Վերջին կարգադրութեան մը համաձայն հանդէսին հրաւիրուած են միայն նախարարները, պետական բարձրատիճան պաշտօնատարները, երոպական թերթերու թղթակիցները, տեղական ամէն ազգէ մամուլի ներկայացուցիչները ևն. ևն.:

Հանդէսը տեղի պիտի ունենայ Մայր-եկեղեցոյ մէջ, ուր ժողովուրդին համար առանձին սահման մը պիտի գծուի: Արդէն անուանուած է ծանօթ անձնաւորութիւններէ Մասնախումբ մը, որ պաշտօն պիտի ունենայ հրաւիրեալները ընդունելու:

Կեդր. Յանձնախումբը յարմար դատած է որ խճողում տեղի չունենալու համար, Ազգ. ժողովը գումարուի ուրբաթ իրիկուն նախատօնակի արարողութիւններէն առաջ, փոխանակ շաբաթի, ինչպէս մտադրուած էր:

Յանձնախումբը իր խորհրդակցութիւնները գրեթէ անարտած է ծրագրի գլխաւոր գիծերուն շուրջ և արդէն պատրաստած է հետեւեալ յայտագիրը, որ թերեւս նոր սրբազրութիւններ կրէ.—

Ք. Ա Ս Ս

Ե.Ս.ՄԵՐԳՈՒԹԻՒՆ, ՊԵՏԱՐԱՆ, ՀՈՂԱՆՈՒՅԻՍ

Պատահիչ և ցախազան հոգեւոր հանդէսին՝ Գեր. Պատր. Տեղապահ Ս. ր:

Ք. Ա Ս Ս

Հ Ա Ն Կ Է Ս

ԲՈՅՈՒՄ

(Խօսք Ասեմայեցիին)

ԲՆՄԱՆԵԱՒ ԿՈՎՈՒՄ

(Երկուս խումբ Կոմիսսա Վրդ. Ի)

ՀԱՌ

(Յիլիէ Արեւ. Գուրեան)

ՌՎ. ՄԵՄԱՍԻՄԱՆՁ.

(Երկուս խումբ Կոմիսսա Վրդ. Ի)

ՀԱՌ

(Վեր. Արեւ. Տալաւան)

ՏԵՐ ԿՅՈՑ.

(Կոմիսսա Վարդ. Ի խումբով)

ԽՈՍԳ ԹՈՒՐԹԵՐԷՆ

(Ասեմայեցի և Կոմիսսա)

ՌՐ ՆՈՐԱՓԵՏՈՒՐ.

(Երկուս խումբ Կոմիսսա Վրդ. Ի)

Սկիզբ կեղեցական արարողութեան ժամը 8. պատահաւ 10.

Հողեհանգիստ 11¹/₂. հանդէս ժամը 1:

* Պայտջ գրավածահները գրով մը կեդր. Յանձնախումբին յայտնած են թէ 5000 օրինակ պիտի տպագրեն հանդէսներուն մէջ խօսուած ճառերը և պիտի դնեն Յանձնախումբին տրամադրութեան տակ, զոչացած արդիւնքը յատկացուելու համար կրթական «Փօստ»ին: Նոյնպէս Պալանց էֆ. գրով մը յայտնած է թէ Ս. Սահակայ և Մեսրոպայ մեծաղբ պատկերները պիտի տպագրէ 3000 օրինակի չափ Յանձնախումբին միջոցով ծախուելու և արդիւնքը կրթական «Փօստ»ին յատկացուելու համար:

* Իսկ Բերայէն կառքերու ծանօթ հայթայթիչ Նիք. էֆ. Բիշթօֆ հետեւեալ հայերէն նախակը զրկած է կեդր. Յանձնախումբին:

* Գրականութեան և լեզուի հանդէպ ունեցած բուն սէրս և զգացումս և գործիս բերմամբ Հայ Ազգին հանդէպ տածած համակրութիւնս արտայայտելու թանկագին առիթ մը գտած ըլլալու ակնկալութեամբ՝ փոքրիկ խնդրանք մը կը համարձակիմ ներկայացնել:

* Յառաջիկայ Հոկտ. 12ի շաբաթ օր հայ տառերու գիւտին 1500ամեակի և հայ տպագրութեան չորքրորեան յորեկանին առթիւ Երեւանի Պատ. Յանձնաժողովոյ տրամադրութեան տակ կը դնեմ երկու Լանտո և եթէ հարկ տեսնուի աւելի թուով, խնդրեմ որ այս շնչին ծառայութիւնս ընդունելու բաւհանձութիւնը չնորոշուի ինձ:

* Սոյն խնդրանքս ընդունելութիւն գտնելու պարագային, պիտի խնդրեմ որ երկու օր առաջ ինձ ծանուցուի Լանտաներուն ուր զրկուիլը ու որոշեալ ժամը:

ԳՈՒՍԳՐԱՌԻ ՄԷՋ

Գուցարուի մէջ և համազգային Մեծ Երեւանը հանդիսաւորապէս տօնելու համար պատրաստութիւններ տեսնուած են նախաձեռնութեամբ «Ասպարէզ» Լսարն. Միութեան, Մայր եկեղեցոյ զպրաց դասուն, Յառաջիմասէր Տիկնանց և «Բնար» երաժշտական ընկերութեանց և այս առթիւ Հկտ. 13ին կիրակ առաւօտ հանդիսաւոր պատարագ մատուցուելէ վերջ Մայր եկեղեցոյ մէջ, կէսօրէ յետոյ ժամը 1ուկէսին Ծանոթացուցչապար Վարձուած Շարք թատրոնին մէջ տեղի պիտի ունենան բանաստեղծութիւններ, երաժշտութիւն, մենաստեղծութիւններ, կենդանի պատկեր և նամանակաւ սինեմայի ներկայացում, յատկապէս պատրաստուած ֆիլմով հայկական տեսարաններ ու նշանաւոր անձնաւորութիւններ: Իսկ Ֆէլէկեան թատերախումբին կողմէ՛ Ա. Ահարոնեանի «Արցունքի Հովիտը»: Հանդէսին բանաստեղծներն են՝ Տիկ. Թ. Լոյիկ, Բորթ. Սաչատրիան, Է. Ակնունի, ևն.: Հանդէսին փայլը անգամ մը եւս կ'աւելցնէ հրաւիրուած Պ. Ծանուրատեան յայտնի թէնօրը, Օր. Մանիկ Պէրպերեան և Է. Երեմեան քոյրերը: Տոմսերը արդէն հրատարակ հանուած են փութացէք գնել:

ԽԱՍԳԻՂԻ ՄԷՋ

Խասգիղի մէջ եւս կազմուած է յանձնախումբ մը որ կը մշակէ ծրագիր մը արժանաւոր կերպով տօնելու համար Մեծ Երեւանը՝ մասնակցութեամբ Գալֆեան Որբանոցին: Եկեղեցիին մէջ բանաստեղծութիւններ պիտի ըլլան տառերու գիւտին հայ տպագրութեան ևն. Ի վրայ Յանձնախումբը հրաւիրած է հայ աւետարաններ քարոզչին ալ՝ մասնակցելու համար այս համազգային հանդէսին, որ սիրով ընդունած է և պարագային յարմար բանաստեղծութիւն մըն ալ ինք պիտի ընէ: Գալֆեանի որբանոցը արդէն շաբաթ զրչեր պզտիկ՝ այլ չքեղ զպրօցական հանդէս մըն ալ պիտի սարքէ այս առթիւ:

ՍԿԻՒՍՏՐԻ ՄԷՋ

Սկիւտարի մէջ Պէրպերեան վարժարանի նախաձեռնութեամբ կազմուած և Թաղական Նորհուրդներուն, բոլոր Միութիւններուն և վարժարաններուն ներկայացուցիչներէն բաղկացած յորեկանական յանձնաժողովը շաբթ մը հանդիսութիւններ կազմակերպած է Մեծ Երեւանին առթիւ:

Շաբաթ օրը Սկիւտարի բոլոր մարմիններէն բաղկացած պատգամաւորութիւն մը պիտի ելքայ Մայր եկեղեցիի հանդիսութեանց մասնակցելու:

Կիրակի օրը, առաւօտուն պատարագ և հոգեմտաբան տեղի պիտի ունենայ Ս. Կարապետ եկեղեցիին մէջ, յետոյ թափօր մը պիտի կազմուի, որուն պիտի մասնակցին Սկիւտարի բոլոր միութիւններու ներկայացուցիչները և վարժաբաններու առջեւն անցնելով պիտի երթայ այցելութիւն տալու Սկիւտարի գերեզմանատան մէջ թաղուած նշանաւոր գրագէտներուն յիշմունքուն, որոնց վրայ գրաւորներ պիտի դնէ: Կերեղմանատան մէջ պիտի բանաստեղծեն Օր. էֆ. Մրմրեան և Պ. Գանիէ: Վարժմանս կէս օրէն վերջ Սկիւտարի մարմնամարզարանը իր պարտէզին մէջ հանդէս մը պիտի տայ ժողովուրդին:

Իսկ իրիկունը Տուկէսին տեղի պիտի ունենայ Ս. Սալ եկեղեցիին մէջ գրական-գեղարուեստական երեկոյթ մը ուր պիտի խօսին Պ. Պ. Տ. Չրաքեան և Տ. Չեօկիրեան մին հայ գրերու գիւտին և միւսը հայ տպագրութեան վրայ: Պէրպերեան վարժարանի և Տալան ճեմարանի աշակերտներէն բաղկացեալ երկուս խումբ մը պիտի երգէ Կոմիտաս վրդ. Ի կողմէ ներդաշնակուած «Ո՞վ սեռաքանի զուգորդուն և ուրիշ խմբերդին»: Պէրպերեան պիտի երգէ ամբողջ յանգստի և պիտի արտասանէ Միամակտի Ս. Մեսրոպը: Եթէ պատգամները ներեն, ժողովուրդը պիտի չքիլ լուսազարդուած առններու առջեւն ջահագնացներէ և Բաֆֆիի ֆանֆառով առաջնորդուած:

ԻՋՄԻՐԻ ՄԷՋ

Իճմիրի մէջ եւս Մեծ Երեւանը հանդիսաւոր կերպով տօնելու համար տեղւոյն Գաւառ. ժողովին կողմէ պէտք եղած հրտանալը արուած է բոլոր թաղականութիւններուն: Ասիկէ զատ, Գաւառ. ժողովին կողմէ ընտրուած է ինը հոգեկոց Յանձնախումբ մը հետեւեալ անձերէն.— Տեարք՝ Գեորգ Պոպուի, Ջարեհ Գալագեան, Թովմաս Պոյաճեան, Կարպիտ Տիպպեր, Դուկաս Վարպետեան, Մեսրոպ Նուպրեան, Մկրտիչ Սարճեան, Նազարէթ Հ. Ներսէսեան և վաւան Պարտիզպանեան:

